

ՀՈՂԱԹԱՓԵՐ

Միջանցքում շարքով դրված են 20 հողաթափեր՝ 10 աջ և 10 ձախ: Տուն գալով Կարենը վերցնում է 2 հողաթափ՝ 1-ը աջ, մյուսը՝ ձախ, որոնք իրեն առավել հարմար կլինի հագնել: Պարզ է, որ ձախ հողաթափը պետք է դրված լինի աջ հողաթափի ձախ կողմում և նրանց միջև հեռավորությունը պետք է լինի ինչքան հնարավոր է փոքր (հեռավորությունը նրանց միջև եղած հողաթափերի քանակն է):

Գրել ծրագիր, որը կհաշվի այն հողաթափերի քանակը, որոնք գտնվում են Կարենին ավելի հարմար հողաթափերի միջև:

Մուտքային տվյալներ

Մուտքում տրված է հաջորդականություն՝ 10 զրոներից և 10 մեկերից կազմված: 1-ը համապատասխանում է ձախ հողաթափին, իսկ 0-ն՝ աջին: Թվերն անջատված են բացատանիչերով:

Ելքային տվյալներ

Ելքում պետք է արտածել Կարենին հարմար հողաթափերի միջև գտնվող հողաթափերի քանակը և -1, եթե այդպիսիք գոյություն չունեն:

Օրինակներ՝

N	stdin	stdout
1	1 0 1 0 1 0 1 0 1 0 1 0 1 0 1 0 1 0 1 0	0
2	1 1 1 1 1 1 1 1 1 1 1 0 0 0 0 0 0 0 0 0 0 0	0

Պատրաստե՛ք թամարա Հովհաննիսյանը: